

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Տարեկան գին և Պոլսոյ հմր. 10 Մճ.  
Գաւառաց 2 լիրա  
Վեցամս. և Պոլսոյ 5 Մճ.  
Գաւառաց 1 լիրա  
Օտար երկիրներու 50 Ֆր.  
Մանուկան տողը մէկ անգամի հա-  
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 դրշ է: աւելի անգամներու  
համար դատ սակարկութիւն կը-  
լայ:  
Իւրաքանչիւր թիւ 40 փորա արծ:



Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Դուրս գնացած լրագրաց ճանրու  
ծախքը խմբագրութեան վրայ է:  
Լրագրաց փոխարեւել նամակ  
կամ որ քիչ քան թիւն խմբագրի:  
— Տնօրէնի պատուիրակի, Վալա-  
թիա Ստանբուլի շատակի թիւ  
198, հոգի եւս: Ստանբուլի գրասեն-  
եակը:  
Ճանրու լրագրաց ճանրուած նա-  
մակ շրջապատի շատակի  
Չապուած նամակի յօդուած, կե-  
տ չեն տրուիր:

Հ Ա Ն Ս Պ Ա Զ Օ Ր Ե Ա Յ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 4 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպական գիտաւոր լրագիրք՝  
Հայաստանի բարենորոգմանց խընդ-  
րոյն վրայ Անգղիոյ Լորտերուն ժո-  
ղովին մէջ եղած վիճարանութեանց  
առթիւ կը շարունակեն Հայկական  
խնդիրն իրենց խորհրդածութեանց  
նիւթ ընել: Արդէն քանի մը նշանա-  
ւոր լրագրաց խորհրդածութիւնները  
թարգմանելով մեր ընթերցողաց հա-  
ղորդեցինք: Այսօր ալ Գաղղիական  
Տէպա լրագրին մէկ յօդուածը կը  
թարգմանենք, որոյ խորհրդածութիւն  
ները շատ ճիշդ են, և մանաւանդ  
մասնաւոր կարեւորութիւն մ'ունեն  
այս պատճառաւ որ յիշեալ լրագիրը  
Բ. Դրան բարեկամ թերթերէ մին է:

“ Լորտերուն ժողովին մէջ ուշադ-  
րութեան արժանի վիճարանութիւն  
մը տեղի ունեցաւ Հայոց նկատմամբ:  
Լորտ ֆարնարփոն պարզ և միանգա-  
մայն կարուկ լեզուով մը իւր պաշտօ-  
նակցաց ուշադրութիւնն հրաւիրեց՝  
Թուրքիոյ այնքան անձնուէր եղող ժո-  
ղովրդեան մը ներկայ վիճակին վրայ:  
Անգղիական կառավարութեան հար-  
ցուց թէ Դուռը Պէրլինի վերահս-  
տովին մէջ այդ ժողովրդին նկատմամբ  
յանձն առած պարտականութիւննե-  
րը կատարած էր: Յետոյ Հայոց օ-  
րինաւոր բարձանաց վրայ խօսելով,  
Լորտ ֆարնարփոն ըսած թէ արոյց հա-  
ւասարութիւն, հարստահարութեան  
դէմ պաշտպանութիւն, իրենց կենաց  
և ընչից ապահովութիւն և քրիստոն-  
եայ կառավարչի մ'անուանումը մի-  
այն կը խնդրեն: Ինչպէս որ կը տես-  
նուի, Հայք այն բաները միայն կը  
խնդրեն, զորս պարկեշտ կառավա-  
րութիւն մը կը պարտի տալ իւր հը-  
պատակաց: Անօգուտ է յիշել Դրան  
ըրած խոստումներն և Եւրոպիոյ նը-  
կատմամբ յանձն առած հանդիսա-  
ւոր պարտականութիւնները: Մի-  
այն պիտի ըսենք թէ Եւրոպական մի-  
ջամտութիւնը Թուրքիոյ մէջ գործադ-  
րուի սկսելէն առաջ իսկ, Դուռն՝  
իւր ամենէն աւելի բարգաւաճ վի-  
ճակին մէջ՝ յաճախ յանձնարարած  
է դաւառաց կառավարիչներուն որ  
քրիստոնէից ապահովութեանն հըս-  
կեն և անոնց նկատմամբ արդարու-  
թիւն ՚ի գործ դնեն: Եթէ քրքիս-  
տոնեայ կառավարչի մ'անուանումն  
ի բաց առնուի, որոյ վրայ դարձեալ  
պիտի խօսիմք, Հայոց պահանջումն  
ըր Շէրիի տրամադրութեանց կատա-  
րելագրան համաձայն կը գտնուին:  
Ի՞նչ պատճառաւ ուրեմն Դուռը՝ թէ՛  
խալամութեան օրինօք և թէ՛ նոյն իսկ  
իւր շինած օրինաց զօրութեամբ Հայոց  
պարտ եղած բանը կը զլանայ: Լորտ  
Սալիսպլըրի՝ որ Լորտ ֆարնարփոնի

տուած պատասխանին մէջ Հայոց հա-  
մար իւր համակրանքն և փօքը—Ա-  
սիոյ մէջ Թուրքական յոռի վարչու-  
թեան յարատեւութեանը համար իւր  
զայրոյթն յայտնեց, Օսմանեան կա-  
ռավարութեան այս տարօրինակ ըն-  
թացից պատճառ գտած լինիլ կը կար-  
ծէ՝ առաջարկելով բարեօրոգմանը ը-  
ներու համար դրամ՝ չունենալը:

Այն կարծիքը թէ ամենէն սկզբը  
նական բարենորոգումները քանի մը  
միլիոն լիրայի ծախք կը պահանջեն,  
ասկէց քանի մ'ամիս առաջ ծնած է,  
երբ Դուռն յունիս 4 ի պայմանադը-  
րութեամբ Անգղիոյ հետ կապուած  
լինելով, իւր յանձն առած պարտա-  
կանութիւններէն խուսափելու կաշ-  
խատէր: Այն ժամանակ, Անգղիա՝  
կամ ինքզինք խորտակած ցոյց տալով  
կամ անկեղծապէս հաւատարմով որ  
այդ բարենորոգումները գործադրե-  
լու համար փոխառութիւն մը հար-  
կաւոր էր, առժամայն կերպիւ ետ  
կեցաւ Դրան հպատակներուն վիճա-  
կը բարեօրոգրու համար յանձն առած  
քաղաքակրթական պաշտօնէն: Ճըշ-  
մարտութիւնն այս է որ Թուրքիա  
բաւական դրամական կարողութիւն  
ունի յանձն առած գործին ձեռնար-  
կելու համար. չկայ յիշեցէ՛ք մը, ուր  
ստտիկանութեան պիտոյից յատկաց-  
եալ ծախքը քանի մը միլիոն դրուշի  
չհասնի: հետևաբար, հասարակաց  
ապահովութեան գործածուելու հա-  
մար կառավարութեան ձեռքը գըտ-  
նուած գումարները բաւականէն ա-  
ւելի են նշանակելով բարենորոգմանց  
սկսելու: Դատարանաց յատկացեալ  
գումարներն ալ համեմատաբար ա-  
ւելի մեծ են: Բայց ենթադրելով որ  
ցոյց տրուած պատճառաւք ճըշմա-  
րիտ լինի, միշտ Թուրքիոյ շահը չէ՞ր  
պահանջը քանի մը գործողութիւններ  
ընել իւր ժողովրդաց հանդատութիւ-  
նըն ապահովելու համար՝ Ռուսիոյ  
սահմանակից գաւառի մը մէջ, ուր  
Հայք ստուար մեծամասնութիւն կը  
կազմեն և իրենց բռնելիք ընթացքին  
վրայ սրտատանջութեան և վարան-  
ման մէջ են. չեն գիտեր թէ Թուր-  
քերուն հե՞տ մնան թէ Ռուսաց կողմն  
անցնին, որք իրենց ձեռք կը կարկա-  
ռեն, և իրենց ազդութեան փոխա-  
րէն՝ քաղաքական և քաղաքային հա-  
ւասարութիւն, և անձանց և ընչից  
ապահովութիւն և այլն կը խոստա-  
նան: Լորտ Սալիսպլըրի կերպիւ  
կեղծութեամբ խօսեցաւ երբոր ըսաւ  
թէ Թուրքիոյ մէջ կեցած չարիքը գա-  
րեւոր ժառանգութիւն մ'էին: Կըր-  
նար աւելցնել թէ Թուրք կառավա-  
րութիւնն՝ իւր բարի դիտաւորու-  
թեամբ հանդերձ՝ բորբոքին ան-  
կարող էր այդ վեղձումները բարե-  
նորոգելու: Թուրք կառավարութիւ-  
նը՝ բարենորոգմանց փախաք ունի,  
և աղնիւ Լորտը ճշմարիտ կը խօսի

երբ կը յայտարարէ թէ Սուլթանն ան-  
կեղծաբար իւր ժողովրդաց երջան-  
կութիւնը կուզէ:

Բայց ոչ Սուլթանն և ոչ ալ իւր  
նախարարները ժողովրդաց վիճակը  
բարեօրոգրու միջոցները չեն ուզեր  
ձեռք առնուլ, ոչ ալ յանձն կառ-  
նուն ամենափոքր զոհողութիւն մ'ը-  
նել ժամանակիս պահանջմանց. և  
եթէ իրենց պաշտօնական լեզուին  
մէջ անցեալը կը պարսաւեն և իրենց  
մտերմական խօսակցութեանց մէջ  
կը դատապարտեն իսկ խտաւը, ի-  
րենց սրտին մէջ խորին յարգանք  
կը տածեն այդ անցեալին համար:  
Թող խորհուրդ արուի Սուլթանին  
որպէս զի երկրին շահուց փնտաակար  
եղող իւր բացարձակ իշխանութեանն  
հրաժարի, թող լնդրուի Թուրք փա-  
շաներէն որ իրենց սիրելի եղած կա-  
ռավարական եղանակները փոխեն,  
և յայնժամ՝ անյաղթելի ընդդիմու-  
թիւնը կը ծագին: Կուզէինք մեք ալ  
Լորտ Սալիսպլըրի լաւատեսութիւնն  
ունենալ որ իւր ատենախօսութեան  
վերջին մասին մէջ այսպէս կըսէր:

“ Երբոր աւելի յաջող ժամանակ-  
ներ գան ( և կը կարծեմ թէ պիտի  
“ գան ), այսինքն երբոր քաղաքական  
“ ճնշումը վերնայն կ'պատերազմին վեր-  
“ քերը բուժին, երբոր գիւղացիք կա-  
“ րենան իրենց արտերը վերագառնալ  
“ և աւելի հունձը արտադրել որ վեր-  
“ շապէս գանձը կը հարստացնէ, միով  
“ բանիւ, երբոր խաղաղութեան բա-  
“ րիքները պատերազմին սղեախից տեղ  
“ անցնին, յայնժամ Դուռն հարկ ե-  
“ դած բարենորոգումները գործադ-  
“ րելու միջոցները կունենայ իւր ձեռ-  
“ բը: ”

Մեք կը կարծեմք թէ երբոր այս  
ամենը լինի, զերծումները դարձեալ  
չպիտի անհետանան: Այդ զերծում-  
ները ներկայ ժամանակիս թշուառու-  
թեանէն կամ պատերազմին չարիքնե-  
րէն չեն ծնած, որ՝ ընդհակառակն՝  
քանի մը դաւառաց մէջ ներկայ դը-  
րութիւնը քիչ մը մեղմացուց. այդ  
զերծումներն աւելի հին ժամանակէ  
սկսած և յաջողութեան ու զօրու-  
թեան չափազանցութեանն յառաջ ե-  
կած են. նոյն իսկ կառավարութեան  
բնութեանն և անոր պաշտօնատարաց  
բնաւորութեանն ու խառնուածքին  
հետ կապակցութիւն ունին, և եթէ  
խոր փոփոխութիւնը չլինին կառա-  
վարական գրութեան մէջ, բարե-  
օրում յուսան ընդունայն է: Լորտ  
կրանիլի ճշմարիտ բաւը գտաւ եր-  
բոր ըսաւ. “ Եթէ Անգղիա խտիվին  
“ սրչտօնականութիւնն յառաջ բերե-  
“ ՛լու համար ՚ի գործ դրուած ճըշ-  
“ ման պէս զօրեղ ճնշում մ'ի գործ  
“ դնէր Թուրքիոյ բարենորոգմանց նը-  
“ կատմամբ, այդ բարենորոգումները  
“ շատոնց գործադրուած կը լինէին: ”  
Այս խօսքերն և այն իրողութիւնը,

որոյ կը վերաբերին, ազգարարու-  
թիւն մը կը պարունակեն, յորմէ  
Թուրքիա օգուտ պէտք է քաղէ: ”

Անգղիական Սթանտարտ լրագիրն  
որ Անգղիոյ կառավարութեան բե-  
րան և պաշտպան եղող թերթերէն  
մին է, հետեւեալ կերպիւ կը խօսի  
Լորտերուն ժողովին մէջ Հայկական  
խնդրոյն առթիւ եղած վիճարանու-  
թեան վրայ:

“ Սրեւեթեան խնդիրը — կամ վեր-  
ջապէս անոր մէկ մասն — երէկ դի-  
շեր Լորտերուն ժողովին մէջ բաւա-  
կան ուշադրութեան արժանի խօսակ-  
ցութեան մ'առելիք տուած, թէ և  
պէտք է դիտել թէ Սրեւեթեան Թուր-  
քիոյ քրիստոնեայ ժողովրդեան վիճա-  
կին վրայ Լորտ ֆարնարփոնի յարու-  
ցած վիճարանութիւնը նորութեան  
արժանիքէն դատ ուրիշ ամեն արժա-  
նիք ունէր: Նոր չլուր թէ Դրան  
քրիստոնեայ հպատակներն հարստա-  
հարութեան լուծին ներքե կը հօժեն:  
Թէ արդարութիւնը կը զլայցուի ա-  
նոնց՝ մինչև իսկ իւր ամենէն աւելի  
տարրական ձևերուն մէջ, և թէ ա-  
նոնց վիճակը բացարձակ գերութեան  
քիչ հեռի վիճակ մ'է: Ինչ որ այս նը-  
կատմամբ այժմ կարելի է ըսել, ասկէ  
դարեր առաջ ալ հաւատար զօրու-  
թեամբ կրնար ըսուիլ: Այն առաջը  
թէ “ Սուլթանին ձին անցած տեղեր  
խոտ չբուսնիր ”, զարգայէս արտայայ-  
տութիւնն է այն ճշմարիտ կարծեաց  
թէ առատութիւնն ու գոհութիւնն  
անհամաձայնելի են այն կառավարա-  
կան յոռի գրութեան հետ՝ որ Սուլ-  
թանին իշխանութեան ներքե գըտ-  
նուող երկիրներուն մէջ կը տիրէ: ”

“ Բայց լորտ ֆարնարփոն իրա-  
ւունք ունէր խնդիրն արդի պարա-  
դային մէջ երևան հանելու: Դուռն  
երկու ամիս առաջ Պէրլինի դաշնա-  
դրութիւնն ստորագրած էր, և այդ  
դաշնագրութեան 61-րդ յօդուա-  
ծին համեմատ Սուլթանը կը խոս-  
տանար “ Հայոց բնակած դաւառաց  
մէջ տեղական պիտոյից պահանջած  
բարեօրոգմանն ու բարենորոգում-  
ներն առանց ոյլ ևս յապաղման իրա-  
ցընել, և Քիւրդերուն ու Չէրքէս-  
ներուն դէմ անոնց ապահովութիւնն  
երաշխաւորել ”: Միանգամայն կը  
հաւանէր “ այս նկատմամբ ձեռք առ-  
մանց միջոցները պարբերաբար ի-  
մացընել տէրութեանց, որք անոնց  
գործադրութեանը պիտի հսկեն ”:  
Այս յօդուածին առաջին արամադը-  
րութիւնն Այսթեֆանոսի դաշնագը-  
րութեան տասնվեցորդ յօդուա-  
ծին վերջին մասին ճիշդ ընդօրինա-  
կութիւնն էր. բայց, ինչպէս որ լորտ  
ֆարնարփոն դիտեց, մինչդեռ այս  
յօդուածը պարզապէս տեղական  
գործադրութիւն մ'ունէր, Պէրլինի  
դաշնագրութեան վախճան և մէկը







այ առաւելագոյն չայստանի մէջ և արագապէս տարածեցան երկրին այն ամեն կողմերն ալ ուր Հայք և ուրիշ քրիստոնեայք կը բնակին :

Չէր քէզը շարունակելով իրենց չարագործութիւններն՝ երկրին անհուն աղետոյ պատճառ եղան . անպատիժ մնալով քաջաբերեցան , և իրենց յախշտակութեամբը հարստացան , մանաւանդ որ ամեն տեսակ սուրբքէ ազատ էին և են մինչև ցայժմ . սոսնք յոտից ցգլուխ զինեալ են և անարդեւ և համարձակ կը շրջին քաղաքներն ու գիւղերը :

Մեր այս տեսութիւնն այնչափ ստոյգ իրողութիւն մ'է , որ Պէրլինի վեհաժողովոյն մէջ Օսմանեան պատերազմները խոստովանեցան և Եւրոպական հինգ մեծ տէրութիւնք Պէրլինի դաշնագրին 61 յօդուածով Օսմանեան կառավարութեան վրայ հարկ դրին , որպէս զի Հայոց աշահովութիւնը պաշտպանէ Քրդաց և Չէրքէզաց դէմ :

Նիկոմիդիոյ դաւառն ալ , որ երբեմն Լէֆթերներու և Մանոններու աւաղակութեանց ասպարէզ եղած էր , անմասն չմնաց այն հարստահարութիւններէն , որք մանաւանդ երկու տարիէ 'ի վեր կը գործունին Չէրքէզներու կողմանէ . բայց , ինչպէս յայտնի է , վերջին օրերս յաճախ կրկնուեցան և կը կրկնուին Ասորազարի և շրջակայ գիւղերէն , ինչպէս նաև Պաղչէճիկի , Տէճիկի , Օվաճըզի և Արալսուղիկի կողմերը : Չէրքէզք դաւառնի ամեն կողման ճանաչանքը բռնած՝ հարկբար գիւղերու հետ բնակչաց յարաբերութիւնները կտրած են : Դուրս ելնելու զղղները անոնցմէ կը կողոպտուին և կապանուին , այնպէս որ խեղճ բնակիչները գրեթէ պաշարեալ են : Նիկոմիդիոյ դաւառն մէջ ամեն կողմ ահ և սարսափ կը տիրէ , և աւելորդ է ըսել թէ առևտրական գործերն ալ գրեթէ բոլորովին դադարած են՝ 'ի մնաց երկրին և ամեն կարգի ժողովրդոց :

Մեր այս ըսածները բաւական են հաստատելու Նիկոմիդիոյ Գեր. փառաշնորհին միջոցաւ առ Բ. Դուռն և առ Պատրիարքարանս մատուցուած հանրագրին հետ՝ վերջին օրերս Չէրքէզներու գործած չարագործութեանց 200էն աւելի դէպքերը պարունակող ստուար ցանկն և ուրիշ տեղեկագրեր , որք նոյնպէս հարստահարութեանց և աւաղակութեանց դէպքեր կը ծանուցանեն . ասոնց հըրատարակութիւնը շատ երկայն և տաղակալի լինելով՝ ձեռնհաս անձանց և պաշտօնական մարմնոց կը թողունք , եթէ երբէք կրնայ օգտակար համարուիլ :

Մեր ընդհանուր գաղափար մը տարւո համար միայն կրնանք ըսել թէ գրեթէ ամեն օր սպանութեանց և աւաղակութեանց լուրեր կը լսուին , և կը հրատարակենք հետեւեալ բովանդակութիւնը , որ Պաղչէճիկի գիւղին կը վերաբերի միայն : Երկու տարուց միջոցի մէջ յիշեալ գիւղի բնակչաց ձեռքէն 180 հատ ձի գողցուեր , հարկութեան աւելի անձինք չարաչար գանակածուեր ու կեղեքուեր են և հինգ անձինք ալ սպանուեր են Չէրքէզներէն :

Տեղէն գրեթէ մէկ ժամ հեռու որովորեալ ունեցող Մահալլը անուն գիւղի բնակիչներէն մէկն սպանուած և ուրիշ մ'ան յայտ եղած է :

Անցեալ չորեքշաբթի լուսնալու գիւղերը ժամ 3-6ին միջոցները 10-12 զինեալ Չէրքէզք Օվաճըք գիւղին երթալով տեղոյն բնակիչներէն Տէր Բակուրեան Արատի անուն անձին տուր կը մտնեն ու նոյն անձին և իւր

որդւոյն ձեռքերն ու սուրբը կապելով՝ կ'սպառնան որ ձայն չհանեն ու Չէրքէզք զրուշի արժողութեամբ դարձ և ուրիշ բաներ վերցունելով կը մեկնին :

Նմանապէս երկու Մըսթահալլը զօրականք՝ իրենց հայրենիքն երթալու ժամանակ՝ ինչպէս կը հաստատեն , ճանքան սպանուեր են :

Բօսթայի երթեկեկութիւնն ապահովելու համար կառավարութիւնը գրեթէ բոլորովին Չէրքէզներու հըսկողութեան յանձնած է Բօսթան տանելու և բերելու գործը :

Պրայք քաղաքապետական ժողովոյ նախագահն իբր քննիչ Ասորազար զրկուած է , ուր իւր պաշտօնին ձեռնարկած և քննութիւնն յառաջ տարած լինելով , 'Բ. Դրան մատուցուած բոլոր չարագործութիւնք՝ այն է սպանութեանց և աւաղակութեանց դէպքերը Չէրքէզաց և այլ գաղթականաց վրայ հաստատուել : Բայց թէ այս քննութիւնք արդիւնք պիտի ունենան թէ ոչ , — այժմէն անհընար է դուշակել , վասն զի ուրիշ անպատիւր ալ այսպիսի քննիչներ և կամ են թէ և , բայց արդիւնք մը տեսնուած չէ :

Նամակ կնքելու ժամանակ հետեւեալ լուր կ'առնուի :

Նիկոմիդիոյ փ. Առաջնորդն Ադրային գործով մը Արալսուղի գիւղը կը գտնուի Պօլսէն գառնալէն 'ի վեր : Չէրքէզք կ'երևի թէ զայլոցսմ են Նորին Գերապատուութեան դէմ 'ի բնից նկատմամբ Բարձր Մեծ-Եպարքոսին հանրագիր մատուցած և իրենց չարագործութեանց վերջ տրուելը ինքրած ըլլալուն համար : Չէրքէզք իմանալով որ յիշեալ փ. Առաջնորդն Արալսուղի կը գտնուի , իրենցմէ քանի մը անձինք յատկացուցեր և պաշտօն յանձնելու են տանց որ գիւղին շուրջը սպասեն և գարնակալ լինին , որպէս զի փառաշնորհ գիւղէն մեկնած ժամանակ սպաննեն զայն , և կամ յարմար առթիւ մը գիւղը մտնեն իրենց չար նպատակն 'ի գործ դնելու :

Արալսուղիկի ազգայինք զայս իմանալով , քանի մը կտրիճ Հայեր ընտրել և անոնց յանձնելու են գիւղին պահպանութիւնը :

Քաղաքիս ամեն ազգի բնակիչք ևս իրաւամբ երկիւղ կը կրեն որ մի գուցէ Չէրքէզք օր մը կամ գիշեր մը քաղաքս մտնեն . . . . .

Կրկին Բասէք 16 յունիս 1879 . . . Տէր . . .

Այսպիսի բողոքներ խնդիրներ երբէք օգուտ մը չըբին Բասենցոյց մէջբերուելու , և նորանոր դէպքեր բոլորովին կը վաշտեցնեն զանոց : Ա. Տօրի գիւղէն խաւրճիթէն ըստե՛ծ տեղը որ հերկ կրնէին , Քիւրդերն հինգ եղ տարին . իսկոյն Տօրեցիք Ալիսուղայ գիւղը դատուած ձիւրուր զօրաց զիմեցին օգնութիւն խնդրուել , բայց անոնց Միւլապիմ ազան ըստ թէ պիտէ էմիր Խօք . խեղճերը յուսահատեալ ետ գործին : Եւստիս գիւղացի մէկ Հայ մը որ Արալսուղիէն կուգար , խորախուճար գիւղի մօտ երկու ձիւրուր զօրք և երկու Քիւրդ կը բռնեն , լաւ մը կը տանին , և չորս հազար դրէ շարի ստակն և հալաֆն կ'առնեն և կրնք ճամբայէն զուրս քաշելով կը կայան , որ ժամանակ մը վերջը արտը հաց տանողները կազատեն : Գ. Տօրի ման գիւղէն մէկ Քուրք երեսասորք աղբիւրէն ջուր բերող Հայ օրիորդաց մէկը միտակ ձգելով կ'առնէ ձիւրու վրայ և կը փակել , բայց բարեբաղդութեամբ ճանորուց վրայ արդէն գիւղ դարձող Հայերն աղջկան ազգակին ձայնը առնելով կը վազեն իրարու ձայն տալով , գիւղերուն ժամը երկուցին հազիւ կը հասնին , կազատեն օրիորդը և Ս. Աստուածածնոց վանքը կը

տանին , որ այժմ հոն է : Գ. Կէրէկցի Հայերը սայլով քաղաք երթալու միջոցին , Հասան-Ղալայի և Կարնոյ մէջ տեղ աւելալով սըլազիք վրանին կը յարձակին , լաւ մը կը ձեռնէ և մէկ ալեորի ալ ձեռմը կ'առնուր զազանարար կ'փնտառեն : Այդ Կէրէկցիք յիտակ եկան Կարնոյ առաջնորդարան վերքերին ցոլցին , և մօրտախն մէկ կողմը որ բոլորովին փետուած էին , մաղերն ալ մէկտեղ , խընդիլ տունն Կարնոյ Մէճիսի Պիտայէթին , ան ալ այնպէս գնաց : Այսօր ալ Բասենի ամեն գիւղէ երևելի քէհանները Ռուսոյ բանակին Բասենէն ետ քաշուած օրէն տեղական իշխանութեանց անկարողութեան երեսն մինչև ցայսօր պատահած դէպքերն՝ որ քսան և չորսի կը հասնէին , երեք լեզուով տեղեկագիր չէնած , մէկն Անգղիոյ Ասեմ . հրեպատուին տունն , երկրորդն Ա. Քոսիսէր Ասեմ . Եռուսփ փաշային տունն , իսկ միւսն Ասեմ . Ազգաբնիկան Էֆէնտինուրուն տունն : Տեսնելու այս երեք խընդրագրերն ինչ գործ պիտի տեսնեն , որոց վերջաւորութիւնը այսպէս դարձ էին : «Այս դէպքերն իրենց օրերով կառավարութեան իմաց տրուած են , բայց կառավարութիւնն անկարող է , մինչդեռ նիզամիէ սուարիններն ալ հարստահարող են : Այս դէպքերու գործադրութիւնը , և այսուհետև կենաց և ընչից սպահովութիւն և արդարագոտ կառավարութիւն եթէ այժմէն ի գործ պիտի դրուի լաւ , իսկ եթէ չպիտի դրուին նէ , այժմէն մեղի իմաց տուէք որ արդէն ցանքերնիս ալ չէ բուսել , և քանի որ ամառ է չոր հողիս առնենք և սպահով տեղեր գաղթենք : »

Երբեմն մարդկներ կ'ելնն աղիտարար իրենց վիճակաց առաջնորդին վրայ յօդուած կը դրեն թէ ազգային դէպքեր , ցաւեր և հարստահարութիւններ կառավարութեան ներկայացնելով չի բուղբեր , չեմ գիտեր թէ , կըսէ մեր վիճակին Գեր. առաջնորդը , բողոքողները ինչ ըրին , նախկին Պատրիարք Ամեն. Խրիսեան Սրբադանէն շատ թաղբիւր գրող չեղաւ , բայց վերջապէս զազգրեցաւ . ներկայ Պատրիարք Բարձրաճորտ և անձնանուր Տէր Ներսէս Սրբադանէն շատ արդէն բողոքող չեղաւ , ան ալ գաղղեցաւ : Կարնոյ առաջնորդ Գեր. Յարութիւն սրբազանը Քըղի խնդրոյն վրայ մէկ քանի խօսք աւելի խօսելուն համար մայ մնաց որ ան ալ դադարէր . ես լաւ չեմ որ կըսէ Օսմ. կառավարութեան քաղաքականութեան քաջ տեղեկալ ըլլալու՝ վանքէն դուրս չեմ ելլար : Երկու բան կըսէ ձեզ օրինակ : Բասենցիք , դուք կըսէք թէ մեր Օգոտտախու Սուլթանները յաճորդարար հըրովարտակներուն մէջ Հայն ու Տաճիկն մէկ (միւսովի) կը ճանչնայ . այդ ինչպէս միւսովի է որ Հասան-Ղալայի մէջ Բուշաիէ մէքթալի կայ տէրութեան սընտուակի ծովքովը ու մէջը մէկ Հայ աղայ չկայ . դուք կըսէք թէ իսլամով պիտի ըլլայ : Այլմէկ կէպէ Տ. Յարութիւն Ղալաքարս քէհայի գառը չէք յիշեր որ քրտան ասորիէ ի վեր կը վարէ կ'ըջի մանչ Մուհամմէտ աղայի հետ , որ քիւրդ մ'է : Ասոնք դուք աչքովիդ տեսնելէ վերջը ալ ինչ կը յուսաք :

Ազգատէր Էֆէնտին , ներուի մեղ այստեղ կարճ 'ի կարճոյ Չէր Մեծ . ընթերցողաց ներկայացնել յիշեալ դատը , որ իրուի մեր առաջնորդ Սրբազանին ըսածին շարի կայ :

Մնացեալն հետեւեալ ըստով

ԾԱՆՈՒՑՈՒՄ  
ՉՏԱՐԱՆ ԱՂԻ

Ողջպահական օրէնքներն , որք արդի քաղաքակրթութեան զորաւիգն են , խստիւ կը պատուիրեն մաքրութիւն յամենայնի , մանաւանդ ուտելեաց մէջ : Հասարակ ծովային աղբ բնականայէս ինչ աղտեղութիւններ կրնայ պարունակել , ինքնին յայտնի է , ինչպէս որ գիւրին է ստուգել հարեանցի քննութեամբ : Խնայողութեան վըրայ հիմնեալ արուեստական նոր եղանակաւ մը , այդ աղտեղի և անարգ

աղբ կատարելագոյն կը մաքրուի , կը դուռի , և սալիտակ , բարակ և չոր վիճակի մէջ կը դրուի , 'ի գործածութիւն հասարակաց : Այս նոր հնարքին շնորհիւ՝ հնարաւոր եղած է այնօրան գիւրացին վաճառել այս զըտեալաղն , որ ծովային հասարակ աղէն ունեցած դնոյ տարբերութիւնը կանխապարունակած աղտեղութեան և խոնաւութեան տարբերութիւնը կրնայ համարուիլ :

Կը ծախուի 'ի Զուարան աղի , Մ'օմխանէ Լոյտ խանին կից , ինչպէս նաև և գլխաւոր նպարավաճառաց քով :

Ի Լ Ա Ն

Սիպիր եաղը 3300 գըլէտէն 6000 գըլէտէ գասար պէհէր գըլէտի զուրուչ 16 .

Սլթը երկուրը ճէնօվա փիրինճի 30.000 գըլէտէն 30.000 գըլէտէ գասար զըլ 3, փարա 5 .

Գարատէնիդ սէվահիլի ֆասուլեա սը 23.000 գըլէտէն 30.000 գըլէտէ գատար զըուչ 1, փարա 30 .

Կէլիպօլու վէ Պուլայիլի իրթիհ . քեամը իչուն Կէլիպօլուտա թէպիմ օլունմագ իւզրէ :

Սիպիր եաղը 300 գըլէտէն 600 գըլէտէ գասար զըուչ 17 .

Սլթը երկուրը ճէնօվա փիրինճի 3000 գըլէտէն 4000 գըլէտէ գատար զըուչ 3, փարա 10 .

Գարա տէնիլ սէվահիլի ֆասուլեա սը 2000 գըլէտէն 2300 գըլէտէ գատար զըուչ 1, փարա 35 .

Շար քէջիւ վէ ճիվարը իչուն Շար քէջտէ թէպիմ օլունմագ իւզրէ :

Սիպիր եաղը 1000 գըլէտէն 1200 գըլէտէ գատար զըուչ 18 .

Սլթը երկուրը ճէնօվա փիրինճի 6000 գըլէտէն 8000 գըլէտէ գատար զըուչ 3, փարա 20 .

Գարա տէնիլ սէվահիլի ֆասուլեա սը 3000 գըլէտէն 7000 գըլէտէ գատար զըուչ 2 .

Քէչան վէ ճիվարը իչուն Քէչանտա թէպիմ օլունմագ իւզրէ :

Կէլիպօլու ումում ֆըրքայի ասքէրիլէսի իչուն շէրայիթ սայիլէ յի մուգարէրէսիլլէ լչպու թէմնուզու լուսմինին օն պէշիտէն իթիպուրէն շուպաթըն 'նիհայէթինէ գատար շէհրէ միւպայեա օլունմագ պալատէ մուհարէր էլ մըդտար իւչ գալէմ էրքաքըն Ֆիլյաթը մուհարէրէրի իլէթիպալէրի Էօհտէսինտէ օլուպ իչպու թէմնուզը լուսմինին պէշիլնճի փէնճէնպիհ կիւնիւ միւնապալէրի իճրա օլունմագընտան , իթասընաթիպալ օլանլարըն եէվմի մեղբուրտէ Տարի Շուրայի ասքէրիլէ կէլէլէրի վէ շէրայիթին անլամագ իսթէլէնլէրին էվլէլէ Շուրայի մեղբուրէ միւրամաթ իթալէրի :

2 թէմուզ 1879


Պապը Սէրասքէրի

Նիկոմիլիէ Կլիպսէ անպարընտա միւթեարիմ շուհա վէ սպա վէ պէդ վէ քէստիլ իփի գըրըրըլթըարը իլէքէօհնէ չաարը վէ Կլիպսէ վէ էչեսալի սայիլէ սաթըրմալ իւզրէ միւզալիտէլէ գօնուլթուչ վէ անպարճա օլունմա միւզալիտէսինտէ շուրուլթը մուգարէրէր վէ Ֆիլյաթը մալիւմէսիլլէ թալիպլէրի Էօհտէսինտէ գալուպ թէմնուզը լուսմինին պէշիլնճի բէնճէնպիհ կիւնիւ թէքար միւզալիտէսինին իճրալթըլա գարարը գաթիլիլին վէրիլթէսի մուգարէր օլունմալլէ իշիթիլլայէ թալիպ օլանլարըն եէվմի մեղբուրտէ Տարի Շուրայի ասքէրիլէ կէլէլէրի :

30 հազիրան 1879

Պապը Սէրասքէրի





ՉՐՀԱՆ

Ամերիկայի ջրհանները մեծ և փոքր, երկաթե հաստատուն խողովակներով թէ ջրը շարժելու և թէ խորունկ հորերու համար ածանց գնեցող կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ԿԱՍԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր ավանճեր կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ գիւրու թեւամբ կը կարէ ու գինն ալ ածան է, երաշխաւորութեամբ կը տրուի, աւրուածները կը շտկուի ու կարել չգիտողին դաս կը տրուի. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:

Ա. Չ. Դ.

Մինաս Չերազի գործերը՝ Պոլսոյ գրած ամենեւէն զատ՝ բերայի կողմն ալ կը ծախուին Ղալաթիա—Սարայի դպրոցին դիմացի Պ. Պատէն դաղլիւսայի դրած ամեն քով, հետեւեալ գիւններով.

- Գրական փորձեր 2 ֆրանք
Աղբ. Դաստիարակութիւն 1 1/2 ,,
Թէ ինչ շահեցանք Պէրլ
Ինն Վեհաժողովէն 75 անգիւմ
Հայաստան և իտալիա 1 ֆրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԽՕՄՔ ԶԼՅՅՐԵՆԵԱՅ

Ի վաճառք վարդապետ Պարտէզի
Սոյն գրքերը համառօտակի կը լսուան Պոնտոսի և Բարձր Հայոց քաղաքացի և գիւղօրէից, Բուն, Կէսկէս և Տուսիկ Հայերու, Գրգերու, Զազաներու, Թիւրքերու, Եղիպտիներու և Բոյաներու, նոյա կենցաղին և այլևայլ սովորութից, Այալիքացւոյ երկիցս գաղթականութեան և այլն վրայօք: Գին քառորդ մէճիտ

ՄՏԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ
ԸՍՏ ԲԵԼԻՍԷԻ
(Մայրենի ոճ)
ՄԱՍՆԱ.
Դիւղաբնիւն էրց և էակց
Օրինակ և նիւթք բերանացի և դրաւոր հրահանգաց 3 էն 3 տարեկան տղայոց համար.

Իւր տեսակին մէջ նոր բայց խիստ կարեւոր գործ մ'է, որով մեծարդոյ հեղինակը մեր ազգային վարժարանաց մէկ մեծ պիտոյքը լցուցած է: Ինչպէս անունն ալ կը յայտնէ, տղայոց միտքը խորհրդածութեան վարժեցնելու նպատակով շինուած գիրք մ'է, զոր մեր ազգային դաստիարակաց ուշադրութեան կը ներկայեմք: Գործը 3 մասէ կը բաղկանայ, որք հետզհետէ պիտի հրատարակին: Կը գտնուի ամեն Հայ գրավածաւաւ քով և Բերա Մ. Վէյի և Մ. Պատէնի դրատունները, Գին 1 ֆրանք.

ԽՈՐԱԳԻՒՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. Իրիթիճեան

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ
1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵԻ ՅՈՒԼԻՍ 31
ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with columns for date, location, and amount. Includes entries like '10 45 Ենիսահալէն Մէջար. Պէյլիք. Թար. Ենիք. Սթէն. 32' and '11 30 Բ. Ա. Գալաթիէն Ենիսահալէն Մէջար. Պէյլիք. Թար. Ենիք. 34'.

45 Գանձա, Ս. Հիսար, Գանտ, Վանիք, Չէնի, Պէյլ. 22
Գանտի Իստիւտար: (Բացի ուրբաթէն):
8 45 Պէյլիք. Պէյլիք, Բաշապ. Գանձա, Ս. Հիսար, 25
Գանտ. Վանիք. Չէնի, Պէյլիք, Պէյլիք, Գանտի Իստ.
(Ուրբաթ օրերը Բիթաթ փաշա մահալլաի):

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ
Ժամ Երեւոյն Ելքէր Թէ-

Table with columns for date, location, and amount. Includes entries like '12 45 Գալ. Իստ. Պէյլիք. Գուզի. Օրթ. Պէյլ. Չէնի. Սթէն. 4' and '12 30 Պէյլիք. Օրթ. Պէյլիք. Սթէն. 32'.

Դրացիրս ամեն օր կը հրատարակուի բաց ի կիրակի և տօն օրերէ:
Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտրոգոսի ճամուռի թիւ 198, Նօրօ խան Մատիսի խմբագրատունը: Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգաբարձուաց դրատուններն են.
ԶՄԻՒՆԵՆԱ. Ստեփան էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԳԻՆԱ. Խոսրով » Էստիճեան.
ՊՐՈԻՍՏԱ. Ստեփան էֆ. Թանկէրեան.
ՈՒՍՏՈՒՍ. Արթ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէյլեան.
ԱԳՐԻՍՆՈՒՊՈՒՍ. ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԵՉՈՒՆ. Ս. Եթմէնեան էֆ. Ենիք.
ՍԵՐԱՍԻՆԱ. Նազարէթ էֆ. Յ. Իսթամբուլեանց.
ԵԻԳՈՒԿԻՆԱ.
ԳԱՐԵՆԻ և ՏԵՐՍԻՍ. Կիրակոս էֆ. Ս. Գալաթիէն.
ԵՐԶԷՆԱ. Թադէոս էֆ. Բաղրատունի.
ԿԱՐԻՆԱ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Միսիս » Փօթիկեան.
ՎԱՆԱ.
ԲԵՐԻՍԱ. Սեդրակ » Խորաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թադէոս էֆ. Թաշճեան.
ԵԳԻՍՏԻՍ. Գեորգ էֆ. Ոսկերչեան.
ՄԱՐԿԱ.
ՖՕՐՇՈՒՆ. Ֆէրիտ աղա Ս. Ֆէրիտեան.
ՏՓԻԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղանդեան.
ԿԱՆԱՍՏԱՆ. Պետրոս աղա Հէքիլեան

Advertisement for 'WATERBURY'S' hair restorer. Includes an illustration of a woman with long hair and text: 'WATERBURY'S. ԼՆԻՍՏՐԱՅԻՆՈՒՄ ԱՊԱՂ (Կորոզող) (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)'.

